

թողցի այդք քար ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի» (Ղուկ. ԻԱ. 5-6): Այս մարդարէութիւնը կատարուեցաւ Քրիստոսի 70 թուականին: Հոգովայեցիներուն ձեռքով Երուսաղէմի կործանումէն յետոյ՝ անոնց ձեռքով այրուեցաւ այս հոյակապ Տաճարը՝ հակառակ Տիտոսի հրամանին որ ի զուր կը ջանար փրկել զայն:

Տաճարի շինութեանց մանրամասնութիւններուն կարագրութեան համար դիմել Ս. Գրքին և Յովսէպոսի պատմութեան: Այս մասը մեր ծրագրէն զուրս ըլլալով՝ մենք կուտանք հոս Տաճարին աւետարանական դէպքերը և քրիստոնէական աւանդութիւնները:

1. Ս. Կուսի երից ամաց ընծայման աւանդութիւնը. — Ս. Կոյսը երեք տարու եղած ժամանակ, իր ծնողքը՝ Յովակիմ և Աննա Տաճարին ընծայեցին զայն. ըստ աւանդութեան, Ս. Կոյսը տասներկու տարի հոս բնակեցաւ և հրեշտակներէն կը կերակրուէր. Տաճարին վարագոյրին համար ծիրանի կը մանէր ան. «Եւ յետոյ վիճակեցաւ Յովսէփայ արդարոյն մեծի ծերոյն» (Հան. էջ 235): Կ'աւանդուի նաև թէ «հրեշտակ Աստուծոյ իջեալ յերկնից՝ սպասաւորէր նմա առ սեղանովն, և նա կերակրեալ լինէր ի հրեշտակաց Հոգւոյն, եւ հանապազ լսէր զձայն բարբառոյ եւ զերգահրեշտակաց ի խորանի անդ» (Թան. Բ. էջ 6-7):

2. Քրիստոսի փառասնորեայ ի Տաճարն ընծայման աւանդութիւնը. — Ղուկաս Աւետարանիչը կը յիշատակէ Քրիստոսի ի Տաճարն ընծայման դէպքը, կամ, ըստ Աւետարանի, «յանդիման առնել Տեառն» (Բ. 25-39): Քառասնորեայ ընծայման առթիւ, Գրիգոր վրդ. Տաթևացի կը գրէ հետեւեալ տողերը. «Իսկ այն ոք